Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ <<ՀՀ Արարատի մարզի Եղեգնավանի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի աշխարհագրություն 14 ժամ, ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի:

Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

1. Դիմում (Ձև 1), 1 լուսանկար 3x4,
2. Բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ)
3. Անձը հաստատող փաստաթուղթ,
4. «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
5. Ինքնակենսագրություն (Ձև 5),
6. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
7. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ,
8. Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
9. Որակավորման տարրակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկը ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերը ընդունվում են նոյեմբերի 24-ից մինչև դեկտեմբերի 7-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00 - 15:00 բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա դեկտեմբի 9-ին ժամը 14:00-ին, ՀՀ Արարատի մարզի Եղեգնավանի միջնակարգ դպրոցում:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (093)23-46-25, (093)98-53-17 հեռախոսահամարներով: